

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
aramkosyan@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՅԻ ԱՐՔԱՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազ. պետականությունների քաղաքական դաշտում առանձնահատուկ տեղ ունեն դրանցից երկուսը՝ Հայասան և Ազգին¹, որոնք հայագիտական ուսումնասիրություններում սովորաբար աղերսվում են հայոց հնագույն պետականության և «հայ» ցեղանվան հետ: Եթե Հայասա երկրանվան առնչակցությունը «հայ» ցեղանվանը դժվար է վիճարկել, ապա շատ ավելի բարդ է այս պետության տեղադրության հարցը: Ավանդական տեղադրությունը Բարձր Հայքում, որն առկա է մասնագետների մի զգալի մասի մոտ², մի շարք հիմնավոր փաստարկների լույսի ներքո հնարավոր է կասկածի տակ առնել: Վերջիններս նշում են Հայասայի (հնարավոր է, նաև Ազգիի) մոտավոր տեղը Վանա լճի արևմտյան և հյուսիսարևմտյան մերձափնյա գոտում³, թերևս, ընդգրկելով նաև Բյուրակնի լեռնաշղթան կամ առնվազն դրա մի հատվածը⁴:

Հայասայի և Ազգիի պատմության ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեն այս քաղաքական միավորների արևմտյան հարևան Խեթական տերության հետ կնքված միջպետական պայմանագրերն ու այլ տեքստերը, որոնք ի վիճակի են լուսաբանելու ինչպես նրանց քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը, այնպես էլ վերջինիս հետ ունեցած դարավոր փոխառնչությունների բնույթը: Այս խնդիրների ուսումնասիրության համար առանձնակի կարևորվում են մ.թ.ա. XIV դարում Հայասայի և Խեթական տերության փոխհարաբերություններն արտացոլող

¹ Այս երկու պետական կազմավորումների նույնականության մասին տեսակետը, որ գերիշխում է մասնագիտական գրականության մեջ, իրականում որևէ լուրջ հիմնավորում չունի (այդ մասին տե՛ս Քոսյան, 2008, 275–276):

² Հայասայի և Ազգիի տեղադրության վերաբերյալ արտահայտված տեսակետների համահավաքը տե՛ս Քոսյան, 2004ա, 44–45, 48–50:

³ Քոսյան, 2013, 48–63: Kosyan, 2015, 271ff., նաև Ղազարյան, 2013, 113–117:

⁴ Քանի որ Հայասայի և Ազգիի հարաբերակցության խնդիրը առայժմ վերջնական լուծում չի ստացել, ստորև տեքստում օգտագործվում է միայն Հայասա տերմինը:

երկու պայմանագրեր⁵: Առաջինը խեթական արքայի (ամենայն հավանականությամբ՝ Թուդիսալիյաս III-ը) և Հայասայի կառավարիչ Մարիյայի, իսկ երկրորդը խեթական արքա Սուպալիուլիումաս I-ի և Հայասայի կառավարիչ Խուկկանայի միջև կնքված պայմանագրերն են:

Սույն հոդվածում կքննարկվեն երկու խնդիրներ՝ ա) խեթա-հայասական երկու պայմանագրերի բնույթը, բ) պայմանագրերում ներկայացված հայասական կառավարիչների կարգավիճակը և ազգակցական հարաբերությունները, ինչպես նաև 3) քննարկվող ժամանակաշրջանի քաղաքական համատեքստը⁶:

Պայմանագրերի բնույթը

Խեթական տերության և Հայասայի միջև կնքված երկու պայմանագրերն էլ պատկանում են դիվանագիտական դաշտում՝ պետությունների փոխհարաբերությունները կարգավորող պայմանագրերի ոչ-պարիտետային տեսակին⁷: Հայասան այստեղ հանդես է գալիս որպես ոչ իրավահավասար կողմ: Այս հանգամանքը հստակ արտացոլված է պայմանագրերի գրեթե բոլոր հատվածներում, որտեղ ակնառու է հայասական կողմի վերցրած (ավելի ճշգրիտ՝ պարտադրված) պարտականությունների բացահայտ գերակշռությունը խեթականի հանդեպ: Ըստ էության, խեթական արքայի պարտավորությունները հանգում են միայն Խուկկանայի անձի և ընտանիքի անդամների պաշտպանությանը (§§ 5–6): Բացի այս հատվածից, տեքստերում ուղղակի բացակայում է փոխադարձության սկզբունքը:

Խեթական կողմի պայմանները, որոնք առկա են երկու պայմանագրերում, լավ գուգահեռվում են Խաթթիի և կախյալ պետությունների միջև

⁵ Խեթա-հայասական պայմանագրերի ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (13–6A389, 2013 թ. հուլիս – 2015 թ. հուլիս):

⁶ Հոդվածը տեքստային հղումներով չձանրաբեռնելու նպատակով մենք ուղղակի նշում ենք պայմանագրերի համապատասխան հատվածները: Ծրագիրն ամփոփող կոլեկտիվ մենագրության մեջ դրանք կներկայացվեն ամբողջությամբ: Այստեղ տեքստի վրա հղումների համար կիրառվում են հետևյալ հապավումները՝ ԴԿ = Դիմային կողմ, ՀԿ = Հակառակ կողմ: Խեթական տեքստերը և դրանց կատալոգը հղվում են համաձայն գիտական պրակտիկայում ընդունված հետևյալ համառոտագրությունների՝ Keilschrifttexte aus Boghazköi (= KBo), Keilschrifturkunden aus Boghazköy (= KUB), Laroche 1971 (= CTH), Hittite Texts in the British Museum (= HT):

⁷ Հայագիտական հրատարակություններում այս փաստն արձանագրված էր դեռևս Գր. Ղափանցյանի մոտ (Капанцян 1948: 115 сл.).: Խեթական տերության և կախյալ երկրների միջև կնքված ոչ-պարիտետային պայմանագրերի մասին տե՛ս **Korosec**, 1931, 65ff.: Այդպիսի պայմանագրերի գերակշիռ մասը թվագրվում է հոդվածում քննարկվող պայմանագրերից հետո ընկած շրջանով, այն է՝ մ.թ.ա. XIV դարի երկրորդ կեսից մինչև հաջորդ դարի 30-ական թվականներն ընկած ժամակահատվածով (խեթական արքաներ Մուրսիլիս II, Մուվատալլիս II, Խաթթուսիլիս III և Թուդիսալիյաս IV կառավարման շրջանով):

կնքված մյուս պայմանագրերին⁸։ Դրանք հիմնականում հանգում են հետևյալ կետերին, որոնք ամենուրեք կրկնվում են՝

1) լոյալություն արքայի անձի, արքայական ընտանիքի անդամների, նրա սերնդի և Խաթթիի հանդեպ⁹։

2) պատերազմի դեպքում ռազմական աջակցություն. շատ դեպքերում հատուկ նշվում է, որ կախյալ երկրի անմիջական հարևանությամբ թշնամական ուժերին առաջինը պետք է հակահարված տա հենց տվյալ երկրի զինուժը, նախքան խեթական զորքի հասնելը։

3) արգելք երրորդ կողմի հետ ինքնուրույն հարաբերությունների վրա. այս կետը հատուկ շեշտվում է բոլոր ոչ-պարիտետային պայմանագրերում¹⁰։

Քննարկվող պայմանագրերն ունեն մեկ տարբերիչ առանձնահատկություն։ Խուլկանայի պայմանագիրը կնքված է իր պետությունը լիարժեք ներկայացնող իրավական անձի (Խուլկանա), իսկ ավելի վաղ ժամանակով թվագրվող երկրորդը՝ հավաքական կողմի (Մարիյա և «Հայաստայի ժողովուրդ») հետ։ Վերջինս իր բնույթով ստորադասվում է Խուլկանայի պայմանագրին և գուցահեռվում է այս տարածաշրջանի երկրների հետ կնքված մյուս պայմանագրերին՝ KUB XXIII 72+¹¹, KUB XXVI 29+KUB XXXI 55¹², նաև Առնուվանդաս I-ի կասկական պայմանագրերը¹³։ Այստեղ խեթական արքայի հետ պայմանագիր կնքողները տոհմային ավագանու ներկայացուցիչներն են (LÚ^{MEŠ} «մարդիկ», LÚ^{MEŠ} ŠU.GI «ավագներ»)։¹⁴

Մյուս պայմանագրերի համեմատ, Խուլկանայի պայմանագիրը Խեթական տերության դիվանագիտական պրակտիկայում անցումային փուլ է ներկայացնում. միայն քիչ ավելի ուշ, Սուպպիլուիումասի սիրիական արշավանքից հետո է ձևավորվում պայմանագրերի դասական տիպը¹⁵։

⁸ Պայմանագրերի հրատարակությունները տես՝ **Weidner**, 1923, **Friedrich**, 1926–1930, **Beckman**, 1996։

⁹ Երբեմն այս կետը, ուղղակի ձևակերպումից բացի, լրացվում է արքայի անձի մասին զանազան թշնամական խոսքեր չլսելու, այդ մասին նրան տեղեկացնելու պահանջներով (տե՛ս ԴԿ II 32–38, 52–59)։

¹⁰ Այս կետը հատկապես շեշտվում է բոլոր պայմանագրերում։

¹¹ Տե՛ս **Sayce**, 1930, 1ff. (թարգման.)։ **Gurney**, 1948, 32ff. (թարգման.)։ **Kosyan**, 2006, 72ff. (գիտական տառադարձում, թարգմ. և ծանոթ.)։

¹² CTH 144 (հրատարակվել է հատվածաբար՝ **Otten**, 1967, 55–61)։

¹³ KBo VIII 35 (= CTH 139 [հրատ.՝ **Schuler von**, 1965, 109ff.])։ KUB XXVI 19, KUB XXVI 20 + KBo XXII 132 (= CTH 140 [հրատ.՝ **idem**, 130ff.]) և այլն։

¹⁴ Խեթական տերության հետ նվաճված երկրների փոխհարաբերություններում տոհմային ավագանու դերի մասին տես՝ **Klengel**, 1965, 223–236։

¹⁵ Դեռ Է. Ֆորրերն էր նկատել, որ, ի տարբերություն մյուս բոլոր պայմանագրերի, այստեղ վկա-աստվածների ցուցակը ոչ թե եզրափակում է պայմանագիրը, այլ դրված է առաջին մասում (**Forrer**, 1931, 9)։ Սա վերաբերում է առաջին հերթին Սուպպիլուիումասի՝ ավելի ուշ շրջանում

Հայասայի և Ազգիի դինաստիական խնդիրներ

Քննարկվող պայմանագրերում և խեթական այլ տեքստերում Հայասայի և Ազգիի կառավարիչների փոխհարաբերակցության խնդիրը ներկայումս բավարար չափով ուսումնասիրված չէ, չնայած այն հանգամանքին, որ նրանց կառավարման հաջորդականությունը որևէ կասկած չի հարուցում:

Հայասայի և Ազգիի կառավարիչների անունները պահպանվել են հետևյալ խեթական տեքստերում.

Սուպպիլուլիումասի գործունեությունը – «Դիպված 13»¹⁶

«Թուդիսալիյաս III – Մարիյա» պայմանագիրը¹⁷

«Սուպպիլուլիումաս – Խուկկանա» պայմանագիրը¹⁸

Մուրսիլիս II-ի տարեգրությունները¹⁹

HT 85²⁰

KBo L 49²¹

KUB XVIII 2

Այս ոչ մեծ խմբում ներկայացված են ընդամենը չորս անուններ՝ Կարաննի (կամ Լաննի), Մարիյա, Խուկկանա և Աննիյա:

Սրանցից միայն Կարաննիի կառավարման ժամանակն է հստակ, այն է՝ Թուդիսալիյաս III-ի կառավարման վերջին շրջանը, երբ արքան գահակից Սուպպիլուլիումասի հետ միասին ճակատամարտ է տալիս Կումմախայի մոտ (տես ստորև): Ինչ վերաբերում է Մարիյային, ապա նա հանդես է գալիս որպես խեթական անանուն արքայի հետ կնքված պայմանագրի մի կողմը, և ում անձը, հաշվի առնելով Սուպպիլուլիումասի և Խուկկանայի պայմանագրում հիշատակվող և Սուպպիլուլիումասի հոր (այն է Թուդիսալիյաս III-ը) կողմից Խաթթունասում մահապատժի ենթարկված Մարիյա անունը կրող անձի հետ համադրումը, պետք է նույնական լինեին: Սրանից կարծես բխում է, որ Մարիյան Թուդիսալիյասի ժամանակակիցն է եղել, ում կյանքն ավարտվել է դեռևս նրա կենդանության օրոք, այսինքն Կումմախայի ճակատամարտից քիչ առաջ կամ հետո:

(սիրիական պատերազմներից հետո) կնքած պայմանագրերին (CTH 51 – «Միտտանիի արքա Շատտիվազա», CTH 53 – «Նուխաշշեի արքա Տետտե», CTH 49 – «Ամուրրուի արքա Ազիրու»):

¹⁶ Güterbock, 1956, 66, Fragm. 13.

¹⁷ Friedrich, 1930, 103ff.; Beckman, 1996, 22ff.

¹⁸ Idem.

¹⁹ Götze, 1933, passim. Մուրսիլիս II-ի «Տասնամյա տարեգրությունների» հայերեն հրատարակությունը տե՛ս Պազարյան 2013:

²⁰ Carruba, 1988, 71.

²¹ Carruba, 1988, 72.

Սակայն այնուհետև ծագում են լուրջ խնդիրներ կապված արևելքում Սուլպաիլուլիումասի ռազմաքաղաքական ձեռնարկումների ժամանակագրության հետ, որոնք պահպանվել են «Սուլպաիլուլիումասի գործունեությունը» անվանումը կրող ընդարձակ տեքստերում²²։ Բացառությամբ առաջին երկու աղյուսակների, մյուսների տեղը Սուլպաիլուլիումասի կառավարման ժամանակագրության մեջ շատ դեպքերում պայմանական է և հստակ չէ։

Առաջին հերթին դա վերաբերում է «Դիպված 13»-ից հետո մինչև «Դիպված 25»-ն ընկած ժամանակահատվածին, այն է Կումմախայի ճակատամարտից մինչև Սուլպաիլուլիումասի կողմից դեպի Իսուվա և այնտեղից էլ Հայասա արշավանքը, որի նպատակը այստեղ փախած Խաթթիի բնակչության վերադարձնելն էր։ Հենց այս ժամանակահատվածում, ըստ գաղափարի, պետք է տեղադրել 1) Մարիյայի կառավարումը, 2) նրա մահապատիժը Խաթթուսասում և, ամենայն հավանականությամբ, 3) Խուկկանայի պայմանագիրը։ Ստորև կտեսնենք նաև, որ, հավանաբար, վերոհիշյալ իրադարձություններին կարելի է հավելել նաև Խուկկանայի կառավարման ավարտը։

Առաջին ժամանակահատվածի սկիզբը, անկասկած, պետք է թվագրվի Թուդիսալիյաս III-ի կառավարման վերջին տարիներով, այն է 1350–1345 թթ. միջև։ Ինչ վերաբերում է դրա ավարտին, ապա այն, ամենայն հավանականությամբ, պետք է տեղի ունենար ինչ-որ մի պահ դեպի Իսուվա Սուլպաիլուլիումասի կազմակերպած արշավանքից առաջ կամ ընթացքում, նախորդելով Սուլպաիլուլիումասի սիրիական առաջին արշավանքին²³։ Այսպիսով, Խուկկանայի կառավարումը կարող էր համեմատաբար կարճատև լինել, սկսվելով Թուդիսալիյաս III-ի վերջին շրջանում և ավարտվելով սիրիական արշավանքի նախօրեին, այն է Սուլպաիլուլիումասի գործունեության այն ժամանակահատվածով, որն ընկնում է «Դիպված 25»-ի շրջանում։ Այսպիսի առաջարկը թեև առայժմ ամուր հիմքեր չունի, սակայն այդ առնչությամբ կարելի է վկայակոչել Խուկկանայի պայմանագրի վերջում առկա խեթական արքայի պահանջը Խաթթիի փախստականներին վերադարձնելու մասին²⁴։

Վերոհիշյալ «Դիպված 25»-ում հիշատակվում է դեպի Իսուվա կազմակերպված արշավանքը, որի նպատակն էր դեպի այստեղ փախած Խաթթիի բնակչության վերադարձը²⁵։ Հատկանշական է, որ տեքստում նշվում է Իսուվայից Հայասա ուղղված հավելյալ արշավանքը և այնտեղից խեթական

²² Güterbock, 1956.

²³ Դեպի Իսուվա արշավանքի համար տե՛ս օրինակ, Bryce, 2005, 156.

²⁴ ՀԿ II 84^o) [k]u-iš ŠA KUR URU^{URU}Ha-at-ti NAM.RA^{HLA} pa-ra-a Ú-UL pa-[a-i na-at A-NA ZAG^{HLA}], 85^o) [š]a-an-na-a-i na-an zi-ik ^mHu-uq-qa-na-a-aš e-[ep nam-ma(?) hal-lu-u-wa-i] (նույնը B տարբերակում)։

²⁵ Հ. Գյուտերբոքի կողմից հրատարակված համապատասխան տեքստի KUB XL 8 կրկնօրինակը և եզրակացությունները տե՛ս Klengel, 1968, 66ff.

փախստական բնակչության վերադարձները: Ամենայն հավանականությամբ, Խուլկանան կամ չէր կատարել խեթական արքայի պահանջը կամ այդ պահին նա արդեն գրկվել էր իր իշխանությունից:

Հաջորդ խնդիրը առայժմ չթվագրված «Դիպված 39»-ը և «Դիպված 40»-ն են, որոնց խիստ վնասված տողերում շարադրվում են Հայաստյի դեմ իրականացված արշավանքի որոշ մանրամասներ: Հ. Գյուտերբոկը «Դիպված 39»-ը պայմանականորեն տեղադրում էր Սուլպիլիուիումասի սիրիական երկրորդ պատերազմի շրջանով, ինչ վերաբերում է «40»-ին, ապա նա առաջարկում էր կամ «Դիպված 39»-ը կամ «Դիպված 13»-ը²⁶: Առայժմ այս հարցում որևէ նոր առաջարկ կատարելը հնարավոր չէ երկու բեկորների վատ պահպանվածության պատճառով, թեև խիստ նախնական ենթադրություն կարելի է կատարել, դրանք տեղադրելով միևնույն «Դիպված 25»-ի շրջանով: Նմանապես առայժմ պետք է ձեռնպահ մնալ նաև Սուլպիլիուիումասի հայաստական արշավանքների համատեքստում «Մաշատիյուր 96» նամակի ժամանակագրման հարցում: Դատելով այս նամակում հիշատակվող իրադարձությունների տրամաբանությունից (Խաթթիի հյուսիսային, արևելյան և հարավ-արևելյան շրջաններից, այդ թվում նաև Բսուվայում օգնական զորքերի հավաքագրման դժվարությունները, դեպի Հայասա կազմակերպվելիք արշավանքը, թերևս, այդ զորքերի օգնությամբ), նամակը կարող է թվագրվել Առնուվանդաս I-ի կառավարման վերջին շրջանից²⁷ մինչև Թուդալիյաս III-ի կառավարման ավարտական շրջանը ընկած ժամանակահատվածով²⁸: Այս ընդարձակ ժամանակահատվածում մեզ հետաքրքրող իրադարձության թվագրման հարցում թերևս մի փոքր կռվան կարելի է առանձնացնել: Բսուվայի հայտնվելը գորահավաքի աշխարհագրության մեջ կարող է վկայել վերջինիս նկատմամբ այդ պահին թեկուզ փոքր խեթական ազդեցության առկայության օգտին, ինչը, թվում է, հնարավոր չէր մինչև «Դիպված 25»-ի ժամանակահատվածը: Այսպիսով, կամ իրոք Մաշատիյուրի նամակը կարելի է տանել դեպի Առնուվանդասի ժամանակները կամ «Դիպված 25»-ի շրջանը:

Կարաննի

Հայաստյի արքա Կարաննին (հնարավոր է նաև՝ Լաննի ընթերցումը), հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Մուրսիլիս II-ի կողմից կազմված Սուլպի-

²⁶ Güterbock, 1956, 49.

²⁷ Մաշատիյուրի նամակների այս վաղ թվագրումն առաջարկել է Յ. Քլինգերը (Klinger, 1995, 74ff.):

²⁸ Alp, 1980, 58; Houwink ten Cate, 1998, 52.

լույիլումաս I-ի գործունեությունը ներկայացնող տեքստերում²⁹: Այստեղ հիշատակվում է Թուղխալիյաս III-ի և թագաժառանգ Սուպպիլուլիումասի գլխավորած արշավանքը դեպի Հայասա և Կումմախայի (հայկ. Կամախ-Անի քաղաքը) մոտ տեղի ունեցած ճակատամարտը. դժբախտաբար, տեքստն այստեղ ընդհատվում է: Կարաննիի մասին այլևս որևէ այլ աղբյուրում տեղեկություն չի պահպանվել: Կարելի է միայն վստահաբար ասել, որ Կումմախայի ճակատամարտից ոչ շատ ժամանակ անց Թուղխալիյաս III-ը մահացել էր և իշխանության էր եկել Սուպպիլուլիումասը: Մասնագետների միահամուռ կարծիքով, Կումմախայում խեթերը հաղթել էին և իրենց գերիշխանությունը հաստատել Հայասայի նկատմամբ³⁰:

Մեր նախորդ ուսումնասիրություններից մեկում առաջարկել էինք խեթա-հայասական փոխհարաբերությունների, Կարաննիի և Մարիյայի կառավարման հետ կապված մի վարկած³¹, որը ներկայումս հակված ենք վերանայելու: Ըստ դրա, Մարիյայի սպանությունը Խաթթուսասում նախորդել էր Կարաննիի կառավարմանը: Իրենց արքայի սպանությունը ընդվզում էր առաջ բերել Հայասայում. վերջինիս բնակչությունը ռազմական գործողություններ էր սկսել Խաթթի դեմ, դրդելով Թուղխալիյասին արշավելու Հայասա: Ենթադրում էինք նաև, որ հենց այդ պատճառով Կարաննիի կառավարումը Հայասայում պետք է կարճատև լիներ:

Մարիյա

Անվան գրելաձևը.

^m Ma-ri-ya-aš (ուղղ.)	-	III 68', IV 51'.
^m Ma-ri-ya (տր./հայց.?)	-	III 80', IV 58'; HT 85 3'.
^m Ma-ri-ya-an (հայց.)	-	IV 42'; KBo L 49 ԴԿ I 4.

Պայմանագրերում Մարիյա անունը հիշատակվում է երեք ենթատեքստերում և, նկատի առնելով համապատասխան անձանց նույնացման հարցում առկա որոշ բարդությունները, մասնագիտական հրատարակություններում սովորաբար տարբերակվում են «ավագ» և «կրտսեր» Մարիյաներ: Այսպես.

1) Որպես անցյալում խեթական արքունիքում սեռական հարաբերությունների հողի վրա պալատական արարողակարգը խախտելու պատճառով

²⁹ Güterbock, 1956, Դիպված 13 (A IV 42–45). Նկատի առնելով այս անվան ընթերցման հարցում առակ կասկածները, մենք ձեռնպահ կմնանք դրա որևէ ստուգաբանությանն անդրադառնալուց:

³⁰ Տես, օրինակ, Bryce, 2005, 149f.:

³¹ Քոսյան, 2008, 275–276:

Թուղխալիյաս III-ի կողմից մահվան դատապարտված անձ (ՀԿ III 68–73) – «ավագ» Մարիյա:

2) Ոմն անձ, որը Խուկկանայի պայմանագրի կնքման պահին Հայասայի արքայի փեսան էր (դստեր ամուսինը) (ՀԿ III 80) – «կրտսեր» Մարիյա:

3) «Մուպալիուլիումաս – Խուկկանա» պայմանագրին կցված խեթա-հայասական ավելի վաղ պայմանագրում հանդես է գալիս որպես Հայասայի կառավարիչ (ՀԿ IV 42, 58). հավանաբար, նույնը, ինչ «ավագ» Մարիյան:

Պայմանագրերի՝ գիտական հանրությանը հայտնի դառնալու շրջանից ի վեր մասնագետների գերակշիռ մասը գտնում էր, որ այս անունը կրել են հայասական երկու տարբեր կառավարիչներ (պայմանականորեն նրանք տարբերակվում էին որպես «ավագ» և «կրտսեր» Մարիյաներ). ներկայումս էլ այս տեսակետը դեռևս շարունակում է շրջանառվել, չնայած դրա համար որևէ հիմք չկա:

Է. Ֆորրերի կարծիքով, «ավագ» Մարիյան Հայասայի արքա Կարաննիի հաջորդն էր, ով սպանվել էր Թուղխալիյաս III-ի օրոք, իսկ «կրտսերը» «ավագի» ազգականն էր (հավանաբար, թոռը)³²:

Ի տարբերություն Է. Ֆորրերի, Է. Կավենյակի կարծիքով³³, «ավագ» Մարիյան Թուղխալիյաս III-ի կողմից Կումմախայի ճակատամարտից հետո նշանակվել էր Հայասայի կառավարիչ: Պայմանագրի չորրորդ սյունակը ներկայացնում է նրա հետ կնքված պայմանագիրը:

Է. Ֆորրերի տեսակետն ընդունվում է մասնագետների կողմից³⁴: Ընդ որում ենթադրվում է, որ երկու Մարիյաները չեն պատկանել երկու հաջորդական սերունդների (օր., հայր-որդի, հորեղբայր/քեռի-եղբորորդի/քրոջ որդի և այլն), քանի որ, ըստ ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործող պապպոնիմիայի սովորության, անունը փոխանցվում էր թոռանը, այլ ոչ որդուն³⁵:

³² Forrer, 1931, 3. Ի.Մ. Դյակոնովի կարծիքով (Дьяконов, 1968, 91 сл.), այս երկրորդ Մարիյան կարող էր Խուկկանայի գահակիցը լինել, մի բան, որն իրոք նրան կարող էր Խուկկանայի ժառանգորդը դարձնել՝ որդու բացակայության դեպքում:

³³ Cavaignac, 1930, 16f. ըստ նրա, «կրտսեր» Մարիյայի դիավաժում (III 80) խոսքն ընդամենը սպանված «ավագ» Մարիյայի տանից դստերը ետ վերցնելու մասին է, այսինքն երկրորդ Մարիյա չի եղել: Այս կարծիքին էր, անկախ Է. Կավենյակից, նաև Գր. Ղափանցյանը (Капанцян, 1948, 19 сл.):

³⁴ Carruba, 1988, 67f.; Beckman, 1996, 27.

³⁵ Güterbock, 1940, 35f.; Carruba, 1988, 68. Մարիյա անունը կրող երկու ենթադրյալ անձանց խնդրի մի մեկնաբանություն էլ նշենք (Խաչատրյան, 1998, 47–49). նրա կարծիքով, Թուղխալիյաս III-ի օրոք ապրած Մարիյայի անունը հետագայում վերածվել է հայասական (ըստ Խաչատրյանի՝ «Հայքի») արքաների տիտղոսի:

Վերոհիշյալ տեսակետը ենթադրում է պայմանագրերում որպես Հայաստանի կառավարիչ/արքա հիշատակվող անձանց հետևյալ հաջորդականությունը.

Թուդիսալիյաս III	↔	Կարաննի
	↔	«ավագ» Մարիյա
Սուպալիուլիումաս I	↔	«կրտսեր» Մարիյա – Խուկկանա

Հայաստանի կառավարիչ Մարիյային առնչվող աղբյուրների հիման վրա վերոհիշյալ վերականգնումը, սակայն, թույլ է հիմնավորված, ինչին կանոնադաշտանք ստորև:

Եզրափակելով Մարիյայի մասին հատվածը, նշենք այդ անվան մեկնաբանությունները, որոնք առաջարկվել են մասնագետների կողմից:

Հայ ականավոր լեզվաբան Գ. Ջահուկյանը իր վաղ ուսումնասիրություններից մեկում ենթադրում էր, որ Մարիյայի անունը կարող էր ծագել հնդեվրոպական մի արմատից, որը լատիներենում վկայված է *maro* «ղեկավար, առաջնորդ» ձևով³⁶: Հետագայում նա թեականորեն առաջարկում էր հետևյալ բացատրությունը³⁷: Ըստ նրա, այս անձնանվան հիմքում կարող էր ընկած լինել խեթա-լուվիական *mer-*, *meri-* արմատը (անհայտ իմաստով), որը վկայված է մի շարք անձնանուններում (խեթ. *Marakkui-*, *Maraššali-*, *Maraššaliya-*, լիդ. *Marinda* [վերջինս դիցանուն է]): Սակայն քիչ ավելի ուշ նա կասկածի տակ առավ իր տեսակետը, գտնելով, որ սույն բաղադրիչի իմաստը խեթա-լուվիական լեզուներում բացահայտված չէ և չի կարելի նման համեմատություն առաջարկել³⁸:

Երկրորդ հնարավոր մեկնաբանության համաձայն, այն համեմատելի է խուրր. *mariyanne* (միջագետքյան, ուգարիտյան և խեթական տեքստերում՝ *mariyannu*), ուրարտ. *mari-*³⁹ բառերի հետ, որոնք առաջարկվել է բխեցնել հին հնդկ. *mārya-* «երիտասարդ, պատանի» բառից⁴⁰: Այս տերմինը հին առաջավորասիական տարածաշրջանում հիշատակվում է սոցիալական աստիճանա-

³⁶ Джаукян, 1964, 37.

³⁷ Ջահուկյան, 1987, 326–327:

³⁸ Джаукян, 1988, 65. Այստեղ նա հակված էր ընդունելու այլ մասնագետների կողմից առաջարկվող համադրությունը սեպագրական աղբյուրներում հանդիպող *mariyannu*, ուրարտ. *mari-* բառի հետ (տես ստորև տեքստում), ինչի մասին նա գրել էր դեռևս 1964 թ. (Джаукян, 1964, 37):

³⁹ Այս բառը պարունակող ուրարտական տեքստում գրված է ^{LÚ} *ma-re-GI*, որը հրատարակիչն ընթերցում է *ma-re-ji* և մեկնաբանում որպես «ազնվական» և համեմատում խուրրիերեն *marianne*-ի հետ (Дьяконов, 1963, 39):

⁴⁰ Վ. Իվանովն առաջարկում է այս ուրարտերեն բառը մեկնաբանել որպես «ազնվածին երիտասարդ» (Иванов, 1979, 102) և համեմատել Հայաստանի արքայի անվան հետ:

կարգում բարձր դիրք գրավող ռազմական ազնվականության առնչությամբ (արքայական ծառայության մեջ գտնվող կառավար մարտիկներ)⁴¹: Նշենք նաև, որ ի տարբերություն հայաստանյայն մյուս անձնանունների, Մարիյա անունը մեկուսացած չէ միայն Հայաստանի և Ազգիի անվանաբանությամբ: Այն վկայված է հյուսիսային Փոքր Ասիայի խեթական հնավայրերից մեկից (Մաշատիյոյք = խեթ. Տապիզգա քաղաքը) հայտնաբերված և մոտավորապես Թուրիսալիյաս III-ի (Սուպպիլուլիումաս I-ի հոր) ժամանակներով թվագրվող մի նամակում (^mMa-ri-i-ya)⁴²:

Եվ, վերջապես, կա Մարիյա անվան ևս երկու ստուգաբանություն: Լ. Գինդինի կարծիքով, այս անունը համադրելի է խեթական աղբյուրներում վկայված ^{GIS}marī- «նիզակ» բառի հետ⁴³: Իսկ Վ. Խաչատրյանը փորձում է այն համադրել հայերենում առկա հնդեվր. *mar- «տեղ. արմատի հետ (եայ-ն հայերենի վերջածանց է)⁴⁴:

Ավարտելով Մարիյա անվան ստուգաբանության մասին կարծիքները, նշենք Ջ. Ջահուկյանի ևս մեկ մոտեցում խնդրին⁴⁵: Ըստ նրա, Մարիյայի անունը կազմված է ընդհանուր հնդեվրոպական մի հիմքից, որից ծագում են ինչպես սեպագրական mariyannu, ուրարտ. mari- բառերը, այնպես էլ հայերենում պահպանված mari բառը (վերջինս նշանակում է «էգ թռչուն»), նշելով, որ հայաստանյայն փոխում այն կարող էր տրվել տղամարդուն, եթե ընդունենք, որ Հայաստանում պետք է ուժեղ լինեին մայրիշխանական ավանդույթները⁴⁶:

Խուկկանա

Խուկկանայի անունը պահպանվել է, բացի Պայմանագրից, ևս մեկ տեքստում, որը կազմված է շատ ավելի ուշ ժամանակներում (այդ մասին տես ստորև): Խուկկանայի անվան գրելաձևերը այսպիսի պատկեր են ներկայացնում:

^mHu-uq-qa-na-a-aš (ուղղ.հոլ.) - I 8,10,31, II 10, III 85'; KUB XVIII 2 III 10.

^mHu-uq-na-a-aš (ուղղ.) - I 17.

[^mHu]-uq-qa-na-a (տր.?) - II 20.

⁴¹ Այդ մասին տես, մասնավորապես, Albright, 1930–1931, 217; Kammenhuber, 1961, 16; Иванов, 1979, 107слл.:

⁴² Alp, 1991, N 48, Vs.2. նամակը, գրված է այդ Մարիյայի և մեկ այլ անձի կողմից, որոնք հանդիսանում են խեթական արքայի հպատակները (ամենայն հավանականությամբ, գտնվում են արքայական ծառայության մեջ):

⁴³ Гиндин, 1967, 116.

⁴⁴ Խաչատրյան, 1998, 45, 49:

⁴⁵ Джаукян, 1988, 65сл.

⁴⁶ Այս մոտեցումը Մարիյայի անվանը (նաև Աննիյայի), կարծում ենք, ոչ մի կերպ չի կարելի հիմնավորել: Սա ուղղակի ենթադրություն է, որը ակնավոր հայագետ-լեզվաբանն առաջարկել է այս անունների թվացյալ ստուգաբանության տպավորության տակ:

Hu-uq-qa-na-a-an (հայց.) - I 2.

^mHu-uq-qa-[na-a]-an (հայց.) - I 16.

Խուկկանայի անվան առնչությամբ առայժմ առաջարկվել են երկու հնարավոր մեկնաբանություններ:

Դեռևս ժամանակին Գր.Ղափանցյանն հակված էր այն մասնատելու *hugg-/kk-* հիմքի և *-ana* վերջածանցի և գտնում էր, որ այս անձնանունն ունի անատոլիական-խուրրիական (տերմինը Ղափանցյանինն է) ծագում «հմայել» իմաստով: Այդպիսով, Խուկկանայի անունը կարող էր նշանակել «հմայիչ»⁴⁷:

Խուկկանայի անվան երկրորդ մեկնաբանությունը պատկանում է Գ. Ջահուկյանին, ով, հենվելով հայտնի ֆրանսիացի խեթագետ Է. Լարոշի կարծիքի վրա (անվան հիմքը = խեթ. *huh(h)a-* «պապ») ⁴⁸, հակված էր այդ անվան հիմքը բխեցնելու հնդեվր. **(H)au(H)o-* «պապ» (հայ. *հաւ*) բառահիմքից ⁴⁹:

Պայմանագիրը սուղ տեղեկություններ է պահպանել Խուկկանայի անձի, այն է՝ մինչև Հայաստայի արքա նշանակվելը նրա ունեցած կարգավիճակի մասին:

Հայաստայում Խուկկանայի իշխանության գալու մասին պայմանագրում ուղղակի ասվում է հետևյալը.

ԴԿ I

1) [U]M-MA ^dUTU ^{Šr} ^mŠu-up-pí-lu-li-u-ma LUGAL KUR ^{URU} Ha-at-ti

2) ka-a-ša tu-uk ^mHu-uq-qa-na-a-an ap-pé-ez-zi-in UR. ⁷GE⁷-an

3) ša-ra-a da-a-ah-hu-un nu-ut-ta SIG₅-in i-ya-nu-un

4) nu-ut-ták-kán ^{URU} Ha-at-tu-ši A-NA LÚ ^{MEŠ} ^{URU} Ha-ya-ša-ya aš-šu-li iš-tar-na

5) te-ek-ku-uš-ša-nu-nu-un nu-ut-ta am-me-el NIN₉-YA AŠ-ŠUM DAM ^{UT-TIM}

AD-DIN

1) «Այսպես (ասում է) Արևս՝ Սոււպիլուլիումսը, Խաթթիի արքան:

2) 'Տես, քեզ՝ Խուկկանայիդ, ետին շանը

3) ես բարձրացրեցի և քեզ լավ վերաբերվեցի:

4) Խաթթուսասում քեզ հայասացիների շարքում

5) ընտրեցի և քրոջս քեզ կամովին կնության տվեցի»:

Մինչև վերջին տարիները խեթագիտական, այդ թվում նաև հայագիտական ուսումնասիրություններում Խուկկանայի իշխանության գալու, նրա

⁴⁷ Капанцян, 1948, 69слл. Նրա կարծիքով, այս անունը հնարավոր է համեմատել հայ. *խոկ-ամ* «խոսում եմ, կարդում եմ» բայի հետ:

⁴⁸ Laroche, 1952, 111f.

⁴⁹ Ջահուկյան, 1987, 325: Հեղինակը գտնում էր, որ հայասերեն անձնական գրության ձևը խեթա-ուրվիական լեզուների շարքում ավելի մոտ է լիդիերեն ձևին՝ *xuga*: Ավելի վաղ նա որպես Խուկկանայի անվան լիդիական համարժեք էր դիտում, հետևելով գերմանացի հայտնի խեթագետ Ա. Հոյբեքին (Heubeck, 1959, 62), Լիդիայի արքա Գիզեսի անունը, (Джаукян, 1964, 44сл.; Ջահուկյան, 1970, 43, 73–81):

կարգավիճակի և Պայմանագրի կնքման համատեքստի խնդիրների մեկնաբանությունը հենվում էր դրա տեքստի հրատարակիչ Յ. Ֆրիդրիխի մի ընթերցման վրա: Նա տեքստի երկրորդ տողում *appe/izzi*-ին հաջորդող բարդ գաղափարագրի երկրորդ, վատ պահպանված մասը վերականգնել էր որպես UR.SAG և պայմանականորեն թարգմանել «շարքային հերոս»՝ խեթական արքաների հիմնական տիտղոսներից մեկի (UR.SAG «հերոս») նմանակությամբ: Ըստ նրա տրամաբանության, եթե խեթական արքան «հերոս» է, ապա Խուկկանան պետք է դիտվեր որպես սովորական, շարքային հերոս: *appe/izzi*-UR.SAG-ը վկայված է միայն այս տեքստում: Յ. Ֆրիդրիխը այն տիպաբանություն համադրում էր *appe/izzi antuhša-* «ստորին մարդ» արտահայտության հետ, գտնելով, որ սա կարող էր նշել Խուկկանայի սոցիալական ցածր կարգավիճակը՝ մինչև Հայաստյի արքա նշանակվելը⁵⁰: UR.SAG-li(ya)- «քաջ, խիզախ; հերոս» (=խեթ. *hašta/ili(ya)-*) բառը ծագում է *haštai*, *hašt-* «ոսկոր; ուժ» (= *աքքադ. qarradu*)⁵¹ բառից: Այն տեքստերում սովորաբար հանդես է գալիս խեթական արքաների տիտղոսաշարում՝ որպես մակդիր (անձնանուն + «մեծ արքա» + Խաթթիի արքա + UR.SAG): Յ. Ֆրիդրիխը այս մակդիրը թարգմանում էր «փոքր մարդ» կամ «սովորական զինվոր»⁵²: «Սովորական հերոսը» ավելի ստույգ կարող է բնութագրել Խուկկանայի նախնական կարգավիճակը. նա չէր կարող «հերոս» կոչվել, քանի որ այդպիսին միայն խեթական արքան էր:

Այս բառակապակցության ֆրիդրիխյան ընթերցումը և մեկնաբանությունը հիմք էր տվել Է. Ֆոռերին առաջարկելու Խուկկանայի կարգավիճակի յուրովի մեկնաբանություն: Ըստ նրա, եթե այս տերմինը նշանակում է կախյալ անձ, ապա Խուկկանան, նախքան խեթական արքայի հետ պայմանագիր կնքելը պիտի կախված լիներ մեկ այլ պետությունից, քանի որ փախել էր Խաթթի: Է. Ֆոռերը հետևյալ կերպ էր ներկայացնում Խուկկանայի խնդիրը⁵³.

1) Երիտասարդ տարիքում Խուկկանան եղել է Միտտանիից կախյալ կառավարիչ, այնուհետև փախել և ապաստան էր գտել Խաթթիում՝ Սուպպիլուլիումասի կառավարման սկզբում կամ ավելի վաղ:

2) «Կրտսեր» Մարիյայի դիպվածը (Խուկկանայի փեսան) վկայում է այն մասին, որ պայմանագրի կնքման պահին Խուկկանան արդեն հասուն դուստր ուներ Սուպպիլուլիումասի քրոջից, այսինքն Խաթթի զնալուց մինչև պայմանագրի կնքումը պիտի առնվազն 20 տարի անցներ:

⁵⁰ Friedrich, 1930, 137.

⁵¹ Puhvel, 1991, 233f.

⁵² Յ. Պուլվելն առաջարկում էր մոտավորապես նույնպիսի թարգմանություն («the lowest form of heroic life» – Puhvel, 1991, 234).

⁵³ Forrer, 1931, 3ff.

Այս մեկնաբանությունը չնայած կարող է որոշակիորեն *a priori* ընդունվել, սակայն դրա համար պայմանագիրը որևէ հիմք չի տալիս: Միտտանից կախյալ Խուկկանայի փախուստը Խաթթի բացառապես հենվում է *appe/izzi* UR.SAG տերմինի վերոհիշյալ մեկնաբանության վրա⁵⁴, և չի հիմնավորվում այլ աղբյուրներով:

Սակայն հետագայում Յ. Ֆրիդրիխի ընթերցումը և մեկնաբանությունը վերանայվեց և վերոհիշյալ բաղադրյալ գաղափարագրի երկրորդ մասը (SAG) առաջարկվեց ընթերցել *GE₇*, ինչի արդյունքում ստացվեց բավական տարօրինակ մի արտահայտություն՝ UR.*GE₇* «ետին/ստորին շուն», մի բառակապակցություն, որը խեթական տեքստերում այլևս վկայված չէ (ի դեպ, նույնը պետք է ասել նաև ֆրիդրիխյան թարգմանության կապակցությամբ)⁵⁵:

UR.SAG-ի փոխարեն UR.*GE₇* վերընթերցումը ստիպեց մասնագետներին ուշադրություն դարձնել Խուկկանայի անունը հիշատակող մեկ այլ խեթական տեքստի վրա:

Վաղուց հրատարակված մի գուշակային տեքստում (KUB XVIII 2 = CTH 569), որ կազմված է մ.թ.ա. XIII դ. երկրորդ կեսին (թերևս, Թուդխալիյաս IV-ի օրոք)⁵⁶, հիշատակվում է «ազգեցի Խուկկանան»: Տեքստն իրենից ներկայացնում է գուշակային հարցում երկու խնդիրների վերաբերյալ՝ 1) արդյոք Խուկկանան հավատարիմ կմնա արքային, 2) եթե Ազգին այժմ արքայի դաշնակիցն է, ապա արդյոք ապագայում էլ կդաշնակցի արքայի սերունդների հետ:

⁵⁴ Ըստ Է. Ֆոռերի, եթե այս տերմինը նշանակում է կախյալ անձ, ապա Խուկկանան պիտի հանդիսանար մեկ այլ պետության արքայի ենթական, քանի որ փախել էր Խաթթի: Սակայն տերմինի մեկնաբանությունը որևէ հիմք չի տալիս նրան փախստական համարելու: Դեռ ժամանակին Գր. Ղափանցյանը *appezzi* UR.SAG-ը մեկնաբանում էր որպես «երկրորդ, հաջորդ» և գտնում, որ այս տերմինը նշել է Խուկկանայի ստորադաս կարգավիճակը խեթական արքայի հանդեպ (Капанцян, 1948, 19): Նույնը խեթերի մոտ Խուկկանայի ապրելու ժամկետի մասին, որը Է. Ֆոռերը բխեցնում էր նրա դստեր՝ ամուսնացած լինելու փաստից: Այս փաստարկը համոզիչ չէ, քանի որ Խուկկանայի հասուն դուստրը, թերևս, պիտի ծնված լիներ նրա առաջին կնոջից, որը հիշատակվում է պայմանագրում (ՀՆ III 80'-81') և որին Սուպալիուլիումսը պահանջում է հարձ դարձնել: Ի վերջո, խեթերի և մյուս բոլոր ժողովուրդների մոտ կանանց ամուսնության տարիքը 12–15-ն էր (Houwink ten Cate, 1996, 55), որոշ դեպքերում՝ 10-ը (Hagenbuchner, 1992, 116 Anm. 24 [վերջինս ըստ միջին ասորեստանյան օրենքների՝ 43 II 25, 29, 31]):

⁵⁵ Օրինակ, Rüster-Neu, 1989, 116 («շուն» – արհամարհական իմաստով, քանի որ խեթերեն «շուն» [kuwan-/kun- բառը սովորաբար գրվում է պարզ UR գաղափարագրով]); Beckman, 1996, 23 («a lowly dog»); Klinger, 2005, 108 («letzte Hund») և այլն: Քիչ ավելի հավանական է UR.*GE₇*-ի մեկ այլ մեկնաբանություն, այն է դրա կապը խեթական տեքստերում հիշատակվող մի բառի հետ, որը գրվում է ^{LU}UR.*GE₇* և նշանակում է «շնապահ; որսորդ» (սրանցից առաջին իմաստը վերաբերում է ծիսական արարողություններին – Rüster-Neu, 1989, 116):

⁵⁶ Klinger, 1998, 107, Anm. 10 (այսպիսի թվագրման համար հեղինակը հղում է Schuol, 1994, 100):

Վերոհիշյալ տեքստը իր տեսակում եզակի չէ: Այն պատկանում է մ.թ.ա. XIII դ. կազմված զգալի քանակությամբ նման տեքստերի թվին (զերագանցապես Թուդիսայիաս IV-ի շրջանը), որոնց նպատակն էր նպաստել արքայական իշխանության անարատությանը և սրբազորմանը⁵⁷: Դրանցում ներկայացված են բացառապես մ. թ. ա. XIV–XIII դդ. ապրած հայտնի քաղաքական գործիչները (հիմնականում՝ արքայատոհմի անդամներ)⁵⁸, որոնք ժամանակին ներգրավված են եղել զանազան դավադրություններում (դավադրության մասնակիցներ կամ զոհեր): Գուշակային հարցման նպատակը հետևյալն էր՝ արքայատոհմի ներսում ընթացած պայքարին զոհ գնացածների հոգիներին խաղաղություն պարգևել և հակադիր խմբավորումներին հաշտեցնել:

KUB XVIII 2-ում «ազգեցի Խուկկանայի» հիշատակվելը որպես գուշակային հարցման օբյեկտ ինքնին արդեն կարող է ուղղորդել նրա քաղաքական կարյերայի պարզաբանման հարցում: Խնդիրն այն է, որ CTH 569-ում հիշատակվող բոլոր անձինք կամ զոհ են գնացել դավադրություններին կամ դրա մասնակիցներն են եղել⁵⁹: Այստեղ նշենք մի կարևոր հանգամանք կապված Խուկկանայի երկրի առնչությամբ: Բանն այն է, որ գուշակային տեքստում Խուկկանան նշվում է որպես «ազգեցի»⁶⁰: Նկատենք, որ վերոհիշյալ գուշակային տեքստը կազմված է Խուկկանայից առնվազն հարյուր տարի հետո, այն ժամանակ, երբ Հայասա տերմինը վաղուց արդեն դուրս էր եկել շրջանառությունից: Վերջին անգամ Հայասան խեթական տեքստերում հիշատակվում է Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում», որից հետո այս տարածաշրջանում բացառապես առկա է միայն Ազգին:

Աննիյա

Անվան գրությունը.

^m An-ni-ya-aš (ուղղ.)	-	KUB XXVI 79 I 8; KBo L 49 2'
[^m An]-ni-ya-aš	-	KBo L 49 2', 6'
^m An-ni-ya	-	KBo III 4 III 93
^m An-n[i-ya]	-	KUB XIV 29 I 5

⁵⁷ CTH 569 (փոխկապակցված տեքստերի այս խմբի հրատարակությունը և ուսումնասիրությունը՝ **Hout van den**, 1998).

⁵⁸ Դրանք են՝ Մուպպիլուիումասի վերջին կինը՝ բաբելոնյան արքայադուստր «տավանանան» (Ամմիննայա(?)) – **Hout van den**, 1998, 44), Մուրսիլիս II-ի վերջին կինը՝ Դանուխեպան, արքա Ուրիսի-Թեշուբը, Հալեպի արքա Խալպացիտին, Մուպպիլուիումասի եղբոր որդին՝ Արմա-Թարխունտասը և այլք:

⁵⁹ Որ վերոհիշյալ տեքստում Խուկկանայի հիշատակությունը որպես գուշակային հարցման օբյեկտ կարող էր կապված լինել նրա կողմից իր պարտավորությունների խախտման հետ նկատվել է վաղուց (**Riemschneider**, 1972–1975, 489):

⁶⁰ Խուկկանայի՝ ազգեցի լինելու մասին՝ **Carruba**, 1988, 69; **Klengel**, 1999, 154f.:

^m An-ni-ya(-)[...]	-	HT 85, 1'
^m An-ni-ya[...]	-	KBo L 49, 8'

Գ. Ջահուկյանը այս անվան սկզբի an- հիմքը, հետևելով հայտնի խեթագետ Է.Լարոշին⁶¹, բխեցնում էր հնդեվր. *(H)an- „արական կամ իգական սեռի նախնի“ արմատից, որից խեթա-լուվիական լեզուներում վկայված են մի շարք արական և իգական սեռի անձնանուններ (Anna, Annaniya, Annanza, Annitta և այլն)⁶²: Հետագայում նա հակված էր Աննիյայի անունը անվերապահորեն բացատրելու հայերենով⁶³, ինչպես նաև այդ անվան առկայությամբ հայաստական հասարակությունում տեսնելու մայրիշխանական ավանդույթների գոյությունը: Հայաստերենում վերոհիշյալ արմատի առկայության մասին, ըստ նրա, կարող է վկայել հայերենում *հանի* “տատ” բառի առկայությունը, որտեղ բառասկզբի h-ն կարող էր երկրորդային բնույթ ունենալ⁶⁴:

Գ. Ջահուկյանը չէր բացառում նաև Աննիյայի անվան ստուգաբանության մեկ այլ հնարավորություն, այն է՝ հայաստական Անի քաղաքի անունից: Այս մեկնաբանությունը ընդունելի չէ, քանի որ հենվում է դեռևս ժամանակին Գր. Ղափանցյանի մի ենթադրության վրա, ըստ որի Հայաստայի արքա Աննիյան իր անունով էր իբրև թե վերանվանել հայաստական Ուրա քաղաքը⁶⁵:

Աննիյա անվան մեկ այլ մեկնաբանության համաձայն, այն կարելի է համադրել հայ. *անիստեպ* «խնամյալ» բայի հետ, առանձնացնելով *անի*- հիմքը և *եստ* վերջածանցը⁶⁶:

Հայաստայի արքա Աննիյան⁶⁷ հիշատակվում է Սուպալիուլիումաս I-ի որդի և հաջորդ Մուրսիլիս II-ի տարեգրություններում («Տասնամյա» և «Ընդարձակ»), վերջինիս կառավարման 7–11-րդ տարիների ընթացքում Հայաստա-

⁶¹ Laroche, 1952, 111f. Խեթերենում այս արմատից են կազմված anna-, իսկ լուվիերենում՝ anni(ya)- «մայր» բառերը:

⁶² Ջահուկյան, 1987, 324–325:

⁶³ Джаукян, 1988, 63–65.

⁶⁴ Գ. Ջահուկյանը հղում է Հր.Աճառյանին, ըստ որի վրացերենում հայերենից փոխառյալ *հանի* բառը նշանակում է «նախնի» (Աճառյան, 1977, 33): Հենվելով այս մեկնաբանության վրա, նա ենթադրում էր, որ հայերեն բառը կարող էր պահպանել հնդեվրոպական միասնության շրջանի նախնական իմաստը:

⁶⁵ Капанцян, 1948, 52. Որևէ հիմք չկա ենթադրելու, որ վերոհիշյալ Ուրան նույնական է հետագայի հայկական աղբյուրների Անի-Կամախ քաղաքին: Գ. Ջահուկյանն ինքն էլ էր նշում, որ Աննիյայի և Անիի համադրությունը կարող է ուղղակի պատահական նմանության հետևանք լինել:

⁶⁶ Хачатрян, 1980, 110: Խաչատրյան, 1998, 46:

⁶⁷ Մուրսիլիս II-ի «Տարեգրություններում» (= CTH 61 [հրատ.՝ Götze 1933]) Աննիյաար հիշատակվում է որպես «Ազգիի արքա»:

յի/Ազգի⁶⁸ դեմ մղված պատերազմների համատեքստում: Պարզ չեն ինչպես Աննիայի՝ Հայաստում իշխանության գալու հանգամանքները և ժամանակը, այնպես էլ նրա հետագա ճակատագիրը: Տարեգրություններում վերջին՝ 11-րդ տարվա հայաստական իրադարձությունների կապակցությամբ Աննիայն անվանապես չի հիշատակվում: Այստեղ ուղղակի նշվում է այն մասին, որ Խալիմանա քաղաքից ոմն Մուտտիս ներկայանում է Մուրսիլիսին և հայտնում իրենց հնազանդության մասին⁶⁹: Համենայնդեպս, եթե Աննիայն նախորդ տարվա արշավանքի ընթացքում գահազրկված լիներ կամ մահացած, ապա Մուրսիլիսն այդ մասին անպայման կհիշատակեր:

Հատկանշական է, որ նախորդ՝ 10-րդ տարում հայաստական արշավանքն անավարտ էր մնացել⁷⁰, որի պատճառը խեթական արքայի երկու տարբեր տեքստերում տարբեր կերպ է ներկայացվում: Ընդարձակ տարեգրություններում որպես պատճառ նշվում է ձմռան վրա հասնելը, այնինչ մեկ այլ տեքստում խոսվում է Արևի խավարման և այդ առիթից օգտվելով թագուհու կողմից արքային գահազրկելու մտադրության մասին⁷¹: Թերևս, երկու տարբերակներն էլ կարող էին համապատասխանել իրականությանը: Խեթական թագուհին (տեքստում՝ տավանաննա) ոչ թե Մուրսիլիսի կինն էր, այլ, թերևս, նրա հոր՝ Մուպպիլուլիումաս I-ի վերջին կինը՝ բաբելոնյան արքայադուստրը, ում հետ Մուրսիլիսի հարաբերություններն ի սկզբանե լարված էին, ինչի մասին վկայում է մեկ այլ տեքստ ևս⁷²:

Հենվելով Մուրսիլիսի «Տարեգրությունների» և «տավանաննայի» դավադրության մասին պատմող տեքստի ընձեռած հնարավորությունների վրա, ինչպես նաև հաշվի առնելով Աննիայի հետ Մուրսիլիսի կնքած պայմանագրի առկայությունը (տես վերը)⁷³, Հայաստյի հնազանդեցումը հազիվ թե տեղի ունենար այս երկրի ամբողջական նվաճման արդյունքում: Ամենայն հավանականությամբ, խեթա-հայաստական տևական հակամարտությունն ավարտ-

⁶⁸ Այս ընդարձակ տեքստում Հայասա և Ազգի երկրանունները հերթագայվում են և այդ հանգամանքը վճռական դեր է խաղացել դրանց համարժեքության մասին ենթադրության համար, ինչը ներկայումս գերիշխում է մասնագիտական հրատարակություններում (տես վերը ծանոթ. 1):

⁶⁹ Götze, 1933, 140.

⁷⁰ Հենց այս արշավանքի ընթացքում էին գրավվել հայաստական երկու քաղաքները՝ «ծովի մեջ գտնվող» Արիպսան և Դուգգամման:

⁷¹ KUB XIV 4 ՀԿ 24-32 (De Martino, 1998, 19ff., նաև Քոսյան, 2004թ, 199–200):

⁷² KUB XIV 8 + Izmir 1277 (հրատ. Bin-Nun, 1975, 177ff.; Hoffner, 1983, 187ff.; Den Hout, 1998, 42f.; De Martino, 1998: 19ff.). հավանաբար, թագուհու անունն էր Ամմինայա (Den Hout, 1998, 44):

⁷³ Հավանաբար, միևնույն պայմանագրի մասն է կազմում վաղուց հայտնի KUB XXVI 39 տեքստը (այդ մասին տես Carruba, 1988, 69ff.): Տես նաև Քոսյան, 2005 (տեքստի գիտական հրատարակությունը և մեկնաբանությունները):

վել էր ոչ-պարիտետային պայմանագրի կնքմամբ և Աննիյան շարունակել էր կառավարել իր պետությունում:

Աննիյայի կառավարման հանգամանքների առնչությամբ հնարավոր է առաջարկել մի վարկած, որը կարծես կարելի է հիմնավորել Սուպպիլուլիումասի և Խուկկանայի միջև կնքված պայմանագրում պահպանված մի կարևոր տեղեկությամբ: Խոսքը պայմանագրի այն կետի մասին է, որտեղ խեթական արքան հորդորում է Խուկկանային Մարիյային տրված իր դստերը վերցնել և տալ նրա (այսինքն՝ Մարիյայի) եղբորը (ՀԿ 80'-81'), ինչպես նաև կին չվերցնել Ազգիից: Առաջին պահանջը լիովին համահունչ է հին առաջավորասիական հասարակություններում ընդունված՝ ամուսնական հարաբերությունները կարգավորող օրենքների հետ⁷⁴: Երկրորդ պահանջի էությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. այդ քայլով Սուպպիլուլիումասը փորձում էր Հայաստյում ապահովել խեթական արքայատոհմի գահաժառանգման իրավունքը, քանի որ Խուկկանայի որդին ազգեցի կնոջից, ինչպես նաև նրա դստեր և Մարիյայի ժառանգը կարող էին ապագայում իշխանության հավակնել⁷⁵: Այսինքն, Սուպպիլուլիումասը ձգտում էր Հայաստայի գահին ապահովել խեթական արքայադուստրից ծնված գահաժառանգի իշխանության օրինականությունը:

Սակայն միաժամանակ Խուկկանայի և Մարիյայի միջև փեսա – աներ փոխհարաբերության առկայությունը, ինչպես նաև Աննիյայի հետ կնքված պայմանագրում որպես վերջինիս նախնի Մարիյայի հիշատակությունը թերևս կարող է վկայել այն մասին, որ այնուամենայնիվ Մարիյայի անմիջական հաջորդը կարող էր ինչ-որ ժամանակ անց (Խուկկանայից հետո) հասնել իշխանության: Այս հանգամանքի պարզաբանման հարցում արտակարգ կար-

⁷⁴ Սա այսպես կոչված լեիրատի սովորույթն է, ըստ որի մահացած ամուսնու կինը չէր կարող վերադառնալ հայրական տուն, այլ պետք է դառնար նրա եղբոր կինը: Ի դեպ, այս սովորույթն ամրագրված է խեթական օրենսգրքի 193-րդ հոդվածում (**Hoffner**, 1997, 152), ըստ որի մահացածի կինը պետք է դառնար նրա եղբոր, այնուհետև հոր, իսկ նրանից հետո հորեղբոր կինը: Ի դեպ, այս սովորույթի մասին հիշատակությունը պայմանագրում ամենևին չի նշանակում, որ այն առկա էր հայաստական հասարակությունում, չնայած բացառված չէ: Բանն այն է, որ պայմանագրի տարբեր կետերում խեթական արքան տարբեր առիթներով շարունակաբար հորդորում է Խուկկանային այսուհետև վարվել այնպես, ինչպես ընդունված է Խաթթիում: Այսինքն, նա կարծես ձգտում էր Հայաստյում (համենայնդպես երկրի վերնախավում) ներդնել Խեթական տերությունում գործող սովորույթները:

⁷⁵ Ըստ Խեթական տերությունում գահաժառանգման վերաբերյալ գործող Տելեպինուսի օրենքի (= CTH 19 [իրատ.՝ **Hoffmann**, 1984]), արական սեռի ժառանգի բացակայության պարագայում, արքա կարող էր դառնալ արքայի ավագ դստեր ամուսինը (հետևաբար, նաև՝ որդին)։

ԴԿ II 38) ... ma-a-an DUMU.LUGAL-ma IBILA NU.GÁL nu ku-iš DUMU.MUNUS ha-an-te-
ez-zi-iš

39) nu-uš-ši-iš-ša-an^{LÚ} an-ti-ya-an-ta-an ap-pa-a-an-du nu LUGAL-uš a-pa-a-aš ki-š[a-ru]

և որ տեղեկություն է պահպանվել Օ. Կարրուբայի կողմից գիտական տառադարձմամբ և թարգմանությամբ հրատարակված «Մուրսիլիս – Աննիյա» պայմանագրի մասերը հանդիսացող երկու խիստ վնասված բեկորների վրա (HT 85 և KBo L 49)⁷⁶:

Այստեղ Մարիյան հիշատակվում է որպես Աննիյայի նախնիներից մեկը: Աննիյայի և Մարիյայի անունների համատեղ հիշատակությունը կարող է որոշակիորեն պարզել Հայաստյում Կարաննիից հետո իշխած կառավարիչների հաջորդականության, Խուլկկանայի և նրա հաջորդի միջև հարաբերակցության խնդիրը: Պայմանագրի այս հատվածում, որը դրա պատմական ներածականի մասն է կազմում⁷⁷, հիշատակվում են Մարիյայի օրոք տեղի ունեցած իրադարձությունները (դժբախտաբար, այլ տեղեկատվություն, բացի վերոհիշյալ անուններից, չի պահպանվել): Ահա այդ բեկորները.

HT 85⁷⁸

- 1') [.....]x ^mAn-ni-ya(-)[.....
- 2') [.....]x A-BÍ A-BÍ-Y[A]
- 3') [.....]x-KA-ya ^mMa-ri-[ya(-)]
- 4') [..... S]IG₅-in iš-tén? x-?[.....]
- 5') [.....]x^{MEŠ}-ŠU-NU SIG₅-i[n]
- 6') [.....]x-x-[.....]

Թարգմանություն

- 1') Աննիյա [.....
- 2') պապի[ս]
- 3') և քո [պապի]ն՝ Մարի[յային]
- 4') լավ
- 5') նրանց լավ
- 6')

KBo L 49

ԳԿ

- 2) [.....] nu zi-ik ^mAn-ni-ya-aš
- 3) [.....-t]a-ni
- 4) [.....] ^mMa-ri-ya-an

⁷⁶ Carruba, 1988, 71f. Հենց նրա կարծիքով են այս բեկորները դիտվում որպես պայմանագիր Մուրսիլիս II-ի և Հայաստյի արքա Աննիյայի միջև:

⁷⁷ Carruba, 1988, 71f.

⁷⁸ Idem, 71.

- 5) [.....]-in ku-wa-pí
 6) [.....^mAn]-ni-ya-aš
 7) [.....]x e-eš-tén
 8) [.....]x ^mAn-ni-ya[...]
 9) [.....]x nu šu-me-eš-š[a-...]

Թարգմանություն

- 2՝) Եվ դու՝ Աննիյա
 3՝)]
 4՝)] Մարիյային (եզ.հայց.)
 5՝)] Երբ
 6՝) Ան]նիյա
 7՝)] եղեք/կլինեք
 8՝)] Աննիյա[]
 9՝)] Եվ դուք

Օ. Կարրուբայի կարծիքով, HT 85-ում «պապիս» բառի առկայությունը կարող է հիմք տալ ենթադրելու, որ այստեղ Մուրսիլիսը նկատի ունի իր պապի՝ Թուդիապիյաս III-ի օրոք ապրած Մարիյային: Նույն բեկորի հաջորդ տողի վնասված հատվածի վերջում սկսվող բառը, ըստ հրատարակչի, պետք է վերականգնվի որպես [..... *A-BÍ A-BÍ-KA*-ya «և քո [պապ]ին»⁷⁹:

Այստեղ, սակայն, ծագում է մի կարևոր խնդիր: Արդյոք սույն բեկորի երրորդ տողի վնասված մասում առկա բառը պետք է վերականգնել որպես [*A-BÍ A-BÍ*]- «պապ»: Որ լակունայում գրված նշանը իրոք *BÍ*-ն է, վկայում է տողավերևի փոքր եռանկյունին, սակայն ինչու չենթադրել, որ այնտեղ կարող էր գրված լինել ուղղակի «հայր» բառը [.....*A-BÍ-KA*, այլ ոչ «պապ»: Մեր առաջարկած տարբերակը կարող է էականորեն փոխել հայաստական արքայատոհմի՝ մասնագետների կողմից ընդունված հաջորդականությունը և հնարավորություն ընձեռել ենթադրելու, որ HT 85 բեկորում Մարիյան ներկայանում է ոչ թե որպես Աննիյայի պապ, այլ հայր, ինչը և թույլ կտա Աննիյային համարելու Խուկկանայի թոռը, ծնված նրա դստեր և Մարիյայի ամուսնությունից, ինչի մասին Խուկկանայի պայմանագրում խոսվում է:

Վերոհիշյալ վերականգնման և դրանից բխող համապատասխան մեկնաբանության հիման վրա կարող ենք առաջարկել հետևյալ վարկածը: Մարիյան ամուսնացած էր հայաստական ազնվականներից մեկի՝ Խուկկանայի դստեր հետ: Ինչ-ինչ պատճառներով նա դրժում է իր պարտավորությունները, որի

⁷⁹ Carruba, 1988, 71f.: Այս կարծիքին էր նաև Բ. Մ. Դյակոնովը (Дьяконов, 1968, 92 прим. 43), ով հենվում էր վերը հղված HT 5-ի վրա:

հետևանքով սպանվում է Խաթթուսասում⁸⁰։ Նրա սպանությունից հետո Հայաստանում որոշ ժամանակ կառավարում է Խուկկանան, Մարիյայի աները։ Խուկկանայից հետո Հայաստանում իշխանությունն անցնում է վերջինիս թոռանը՝ նրա դստեր և Մարիյայի որդուն։

Խեթական տերության պատմության՝ այսօր առավել ընդունելի ժամանակագրության⁸¹ հիման վրա, Թուդիսալիյաս III-ի և Սուպպիլուլիումաս I-ի՝ Հայաստայի և Ազգիի հետ ունեցած փոխհարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ.

- 1350–1345 - Թուդիսալիյաս III-ի արշավանքը Հայասա⁸². Կումմախայի ճակատամարտը. պայմանագիր Մարիյայի հետ. Մարիյայի մահապատիժը. Խուկկանայի նշանակումը որպես Հայաստայի արքա⁸³։
- 1345-? - Խուկկանայի կառավարումը Հայաստանում (Խուկկանան պետք է իշխանության գար դեռևս Թուդիսալիյաս III-ի և Սուպպիլուլիումաս I-ի համատեղ կառավարման ավարտական շրջանում և կառավարել վերջինիս օրոք՝ նախքան Մուրսիլիս II-ը)։
- ?-? - Աննիյայի կառավարումը Հայաստանում (սկիզբը կարելի է տեղադրել Մուրսիլիս II-ի կառավարմանը նախորդող ինչ-որ շրջանում, իսկ ավարտը պարզ չէ)⁸⁴։

⁸⁰ Պայմանագրի այդ հատվածում որպես Մարիյայի սպանության պատճառ է ներկայացված արքունի պալատի կնոջ վրա նայելը, ինչը մասնագետները լուրջ չեն ընդունում, այն համարելով «պալատական անեկդոտ»։ Այս առնչությամբ նշենք Պայմանագրի առաջին հրատարակիչ Յ. Ֆրիդրիխի մեկնաբանությունը, ով փորձել էր այդ երևույթի գուցահեռները հայտնաբերել ազգագրական նյութերի հիման վրա (Friedrich, 1930, 159f.)։

⁸¹ Otten, 1968, Wilhelm – Böse, 1989, 74ff.; Astour, 1989, Bryce, 1989, 30.

⁸² Այս արշավանքը 5–6 տարվա հատվածում տեղադրելը պայմանական է, քանի որ այսօր չկա որևէ կո վան Թուդիսալիյաս III-ի կառավարման շրջանի իրադարձությունների թվագրման համար։ Հայաստական արշավանքը պիտի տեղի ունենար նրա կառավարման վերջերին։

⁸³ «Ավագ» Մարիյայից հետո, մինչև Խուկկանայի կառավարումը, այլ արքայի գոյության մասին ենթադրությունը հենվում է երկու փաստարկների վրա՝ 1) երկու հաջորդաբար կառավարած նույնանուն կառավարիչների առկայության անհավանականությունը, 2) Աննիյայի հետ կնքված պայմանագրում նրա պապ Մարիյայի հիշատակությունը։

⁸⁴ Եթե Աննիյայի կառավարման սկիզբը զուտ տրամաբանորեն տեղադրվի 1320-ական թվականներին, այն է՝ Սուպպիլուլիումասի սիրիական երկրորդ պատերազմի շրջանում («Դիպված 25»-ից հետո, երբ խեթերի ողջ ուժերը ներգրավված էին Միտտանիի և նրա դաշնակից Եգիպտոսի դեմ մղվող պատերազմում), ապա հնարավոր է ենթադրել, որ նա Մուրսիլիս II-ի ժամանակակիցն էր վերջինիս կառավարման համեմայնդեպ մեծ մասի ընթացքում։ Մուրսիլիսի հայաստական արշավանքների ավարտին (նրա 11-րդ տարին՝ մ.թ.ա. 1310 կամ 1311 թ.) նրա և Աննիյայի միջև կնքված պայմանագիրը թույլ է տալիս ենթադրելու, որ վերջինս պետք է շարունակել իշխել։

Խուկկանայի կառավարման սկիզբը և ավարտը տրամաբանորեն պիտի տեղադրել խեթա-հայաստական փոխհարաբերությունների ծայրահեղ սրման երկու փուլերի միջև: Նրա կառավարման ավարտի համար որպես ելակետ հնարավոր է մոտավորապես դիտել Սուպպիլուլիումասի հայաստական արշավանքը («Դիպված 25»): Կոլմմախայի ճակատամարտից հետո խեթերի՝ Հայասայի դեմ արշավանքները (տես վերը՝ «Դիպված 25» և «39») պիտի թվագրվեն Սուպպիլուլիումասի սիրիական պատերազմների ժամանակաշրջանով: Վերջիններս երկուսն են՝ 1) «առաջին» պատերազմ (մոտ. 1340), 2) «երկրորդ» պատերազմ (մոտ. 1327–1322):

Եթե արշավանքը տեղադրվի «երկրորդ» պատերազմի շրջանում, որ ավելի հավանական է⁸⁵, ապա հնարավոր կլինի այն դիտել որպես հետևանք Հայասայում հակախեթական ապստամբության, որի ընթացքում Խուկկանան կարող էր զրկվել իշխանությունից:

Հիմնական եզրակացությունները

Հոդվածում ներկայացված խնդիրների ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացություններին:

1) Թուդիսալիյաս III-ի կառավարման ավարտին, Կոլմմախայի ճակատամարտից հետո Հայասան ընկավ Խեթական տերության գերիշխանության տակ: Հայասայի հաջորդ կառավարիչը Մարիյան էր, ում հետ կնքվել էր պայմանագիր: Առայժմ անհայտ հանգամանքների բերումով Մարիյան խախտել էր իր վրա դրված պարտավորությունները, որի համար մահապատժի ենթարկվեց Խաթթուսասում, մինչույն Թուդիսալիյաս III-ի օրոք:

2) Մարիյայի փոխարեն Հայասայի կառավարիչ նշանակվեց հայասացի ազնվական Խուկկանան, ով Մարիյայի կնոջ հայրն էր: Սուպպիլուլիումասի և Խուկկանայի միջև կնքվեց պայմանագիր: Կախյալ պետությունների հետ կնքված պայմանագրերին հատուկ պարտավորություններից զատ Խուկկանան պարտավորվում էր վերադարձնել ժամանակին Հայասայում ապաստան գտած Խաթթիի բնակչությանը, ինչպես նաև դստերը ետ վերցնել Մարիյայի տանից և հանձնել նրա եղբորը:

3) Պայմանագրի կնքումից որոշ ժամանակ անց Խուկկանան խախտում է իր պարտավորությունները, ինչը դրդում է Սուպպիլուլիումաս I-ին դիմելու ռազմական միջամտության: Խեթական զորքը մտնում է Հայասայի հարևան Իսուվա (հետագայի Ծոփք), այնուհետև արշավում է Հայասա և վերադարձնում խեթական բնակչությանը:

⁸⁵ Հնարավոր է, Սուպպիլուլիումասը «Դիպված 39»-ում հիշատակվող արշավանքը նկատի ունենա փարավոնին հղված իր նամակում (KUB XIX 20, տես վերը՝ տեքստում):

4) Սուպպիլուլիումասի և Խուկկանայի պայմանագրի պահպանված տեքստը հավանաբար դրա բնօրինակը չէ, այլ ավելի ուշ շրջանի խմբագրություն: Այստեղ, արդեն Խուկկանայի լոյսալույսի ավարտից հետո կատարվել են որոշ փոփոխություններ, որոնք արտացոլված են տեքստի ներածականում և ավարտական տողերում (Խուկկանայի անձի հանդեպ արհամարհական արտահայտությունը, ինչպես նաև խեթական բնակչությանը վերադարձնելու մասին հատվածը): այդ փոփոխությունները ուշ շրջանի ներդիրներ են:

5) Առայժմ առկա է մնում մեկ հարց: Արդյոք դեպի Հայասա խեթական արշավանքի պահին Խուկկանան դեռևս կառավարում էր այնտեղ, և եթե այո, ապա ինչպիսի ավարտ կարող էր ունենալ այն⁸⁶: Համենայնդեպս, հայասական արշավանքից հետո խեթական աղբյուրներում Հայասայի հիշատակությունները բացակայում են⁸⁷ ընդհուպ մինչև Սուպպիլուլիումաս I-ի որդի Մուրսիլիս II-ի կառավարման յոթերորդ տարին, երբ որպես Հայասայի (տեքստում նաև՝ Ազգիի) արքա հանդես է գալիս Աննիյան՝ որպես Խաթթիի հանդեպ թշնամական դիրքորոշում ունեցող անձ: Աննիյայի և Մուրսիլիս II-ի միջև կնքված պայմանագրի երկու բեկորներից մեկի վնասված մասում նոր վերականգնման հնարավորության լույսի ներքո կարելի է ենթադրել, որ Աննիյան կարող էր լինել Խուկկանայի թոռը, ծնված նրա դստեր և Մարիյայի ամուսնությունից:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր., 1977, Հայերեն արմատական բառարան, հ.Գ, Երևան:

Խաչատրյան Վ.Ն., 1998, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան:

Ղազարյան Ռ., 2013ա, Մուրսիլիս II-ի Տասնամյա տարեգրությունը, Երևան:

Ղազարյան Ռ., 2013բ, Տուրուբերանում Հայասայի տեղորոշման հարցի շուրջ. – «Հայկագուիններ. առասպել և պատմություն» (խմբ. Վ. Բարխուդարյան և ուրիշներ), Երևան:

⁸⁶ Հայասական արշավանքից հետո Սուպպիլուլիումասը ուղղակի ի վիճակի չէր լրջորեն զբաղվելու Հայասայով, քանի որ մեծ պատերազմ էր սպասվում Միտտանիի հետ: Իսկ նրա մահվանը հաջորդած առաջին տարիները կարելի է բնորոշել որպես ծայրահեղ բարդ, որ հիմնականում հետևանք էր Փոքր Ասիայում բռնկված համաճարակի: Համաճարակի մասին հիշատակվում է Արիննա քաղաքի Արևի աստվածուհուն և «Խաթթիի բոլոր աստվածներին» ուղղված՝ Մուրսիլիս II-ի աղոթքներում (= CTH 376 [հրատ.՝ **Gurney**, 1940, **Carruba**, 1969, 239ff.]): Հավանաբար, Սուպպիլուլիումասն ինքը և նրան կարճ ժամանակով հաջորդած ավագ որդին՝ Առնուվանդաս II-ը գոհ գնացին համաճարակին: Մուրսիլիսի «Տարեգրություններում» հիշատակվում է միայն Առնուվանդաս II-ի հիվանդության մասին (**Götze**, 1933, 14f.): Մուրսիլիս II-ի «Տարեգրությունները» հաղորդում են, որ Առնուվանդասի մահվանից հետո բոլոր կախյալ երկրներն ապստամբեցին և սկսեցին հարձակվել Խաթթիի վրա (**Götze**, 1933, 14f.):

⁸⁷ Միայն մեկ տեքստում է հիշատակվում Հայասան՝ ուղղված Եգիպտոսի փարավոնին Սուպպիլուլիումաս I-ի նամակում, որտեղ նշվում են խեթական արքայի նվաճումները, այդ թվում Հայասան (KUB XIX 20 ԴԿ 2՝, հրատ.՝ **Van den Hout**, 64):

- Ջահուկյան Գ. Բ.**, 1970, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան:
- Ջահուկյան Գ. Բ.**, 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան:
- Քոսյան Ա.**, 2004ա, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան:
- Քոսյան Ա.**, 2004բ, Մուրսիլի II-ի հայաստական արշավանքները (նոր սկզբնաղբյուրներ), Պատմաքաղաքական հանդես 2004/2, էջ 197–204:
- Քոսյան Ա.**, 2005, Հայաստաի աստվածները (KUB XXVI 39), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIV, Երևան, էջ 444–457:
- Քոսյան Ա.**, 2008, Հայաստան և Ազգին. - «Շնորհի ի վերուստ. առասպել, ծես և պատմություն» (Հողվածների ժողովածու նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին), Երևան, էջ 263–291:
- Քոսյան Ա.**, 2013, Վանից մինչև Եփրատ (հայոց վաղ պետականության ակունքներում), - «Հայկագունիններ. առասպել և պատմություն» (խմբ. Վ.Բարխուդարյան և ուրիշներ), Երևան, էջ 48–63:
- Джаукян Г.Б.**, 1964, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван. Джаукян Г.Б. 1988, О соотношении хайасского и армянского языков, Историко-филологический журнал 1988/1, 68–88.
- Дьяконов И.М.**, 1963, Урартские письма и документы, Москва.
- Дьяконов И.М.**, 1968, Предыстория армянского народа, Ереван.
- Гиндин Л.А.**, 1967, Язык древнейшего населения юга Балканского полуострова, Москва.
- Иванов Вяч.Вс.**, 1979, Урартск. *marī*, хурритск. *marianne*, хайасск. *Marija*, Переднеазиатский сборник III, Москва, 101–112.
- Капанцян Гр.**, 1948, Хайаса-колыбель армян, Ереван.
- Хачатрян В.Н.**, 1980, Страна Хайк' в составе Урарту, Вестник общественных наук АН АрмССР, 1980/6, 101–112.
- Albright W.F.**, 1930–1931, Mitannian *maryannu*, «chariot-warrior», and the Canaanite and Egyptian Equivalents, Archiv für Orientforschung 7, 217–221.
- Alp S.**, 1991, Die Hethitische Briefe aus Maşat-Höyük, Ankara.
- Archi A. und Klengel H.**, 1980, Ein hethitischer Text über die Reorganisation des Kultes, Altorientalische Forschungen VII, S. 143–157.
- Astour M.**, 1989, Hittite History and Absolute Chronology of the Bronze Age, Gothenburg-Partille.
- Beckman G.**, 1996, Hittite Diplomatic Texts, Atlanta.
- Bin-Nun Sh.**, 1975, The Tawananna in the Hittite Kingdom, Heidelberg (= Texte der Hethiter 5).
- Bryce T.R.**, 1989, Some Observations on the Chronology of Suppiluliuma's Reign, Anatolian Studies 39, 19–30.
- Bryce T.R.**, 2005, The Kingdom of the Hittites, Oxford (II ed.).
- Carruba O.**, 1969, Die Chronologie der hethitischen Texte und die Geschichte der Grossreichszeit (ZDMG Suppl.1), Wiesbaden, S.226-249.
- Carruba O.**, 1988, Die Hajasa-Verträge Hattis. - In: Documenta Asiae Minoris (= Festschrift H.Otten), Wiesbaden, 59–75.
- Cavaignac E.**, 1930, Mariya, Revue Hittite et Asiatique I, fasc.1, 15–17.
- De Martino S.**, 1998, Le accuse di Mursili II alla Regina Tawananna secondo il testo KUB XIV 4. - In: EOTHEN 9, 19–48.
- Forrer E.**, 1931, Hajasa-Azzi, Caucasia IX, 1–24.

- Friedrich J.**, 1926–1930, Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, Bd.1-2, Leipzig.
- Götze A.**, 1933, Die Annalen des Muršiliš, Leipzig.
- Gurney O.R.**, 1940, Some Hittite Prayers, Liverpool Annals of Archaeology and Anthropology 27, 2–163.
- Gurney O.R.**, 1948, Mita of Pahhuwa, Liverpool Annals of Archaeology and Anthropology 28, 32–48.
- Güterbock H.G.**, 1940, Siegel aus Boghazköi, Bd.I, Berlin.
- Güterbock H.G.**, 1956, The Deeds of Suppiluliuma as told by his son, Mursili II, Journal of Cuneiform Studies X, 41–68, 75–98, 107–130.
- Hagenbuchner A.**, 1992, War der ^{LU}*tuhkanti* Neriqqaili ein Sohn Hattusilis III.?, Studi Micenei ed Egeo-Anatolici 29, 111–126.
- Hawkins J.D.**, 1980, Kargamis. - In: Reallexikon der Assyriologie V/1, 426–446.
- Heubeck A.**, 1959, Lydiaka, Erlangen.
- Hittite Texts in the British Museum, London, 1920.
- Hoffmann I.**, 1984, Der Erlaß Telipinus, Heidelberg.
- Hoffner H.A.**, 1983, A Prayer of Mursili II about his Stepmother, Journal of American Oriental Society 103/1, 187–192.
- Hout Th.P.J.** van den 1998, The Purity of Kingship, Leiden - Boston – Köln.
- Houwink ten Cate Ph.H.J.** 1996, The Dynastic Marriages of the Period between ca.1258 and 1244B.C., Altorientalische Forschungen 1, 40–75.
- Houwink ten Cate Ph.H.J.** 1998, The alternative date for the Šunaššura Treaty (KBo I 5), Altorientalische Forschungen Bd.25/1, p. 34–53.
- Kammenhuber A.**, 1961, Hippologia Hethitica, Wiesbaden.
- Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig und Berlin, 1916ff.
- Keilschrifturkunden aus Boghazköy Berlin, 1921ff.
- Klengel H.**, 1965, Die Rolle der «Ältesten» (LU^{MEŠ} ŠU.GI) im Kleinasien der Hethiterzeit, Zeitschrift für Assyriologie 57, 223–236.
- Klengel H.**, 1968, Die Hethiter und Isuwa, Oriens Antiquus 7, S. 63–76.
- Klengel H.**, 1999, Geschichte des Hethitischen Reiches, Leiden-Boston-Köln.
- Klinger J.**, 1995, Das Corpus der Mašat-Briefe und seine Beziehungen zu den Texten aus Hattusa, Zeitschrift für Assyriologie 85, 74–108.
- Klinger J.** 1998, Zur Historizität einiger hethitischer Omina, Altorientalische Forschungen 25/1, 104–111.
- Klinger J.** 2005, Der Vertrag Šuppiluliumas I. mit Hukkana von Hajaša. – In: Staatsverträge, Herrscherinschriften und andere Dokumente zur politischen Geschichte (Hrsg. B.Janowski und G.Wilhelm)(= TUAT, Neue Folge, Band 2), Gütersloh, 106–112.
- Kosyan A.**, 2006, Arnuwandas I in the East, Armenian Journal of Near-Eastern Studies I, 72–97.
- Kosyan A.**, 2013–2014, Rulers of Hayasa: Hukkana, Armenian Journal of Near-Eastern Studies VIII/1–2, 128–134.
- Kosyan A.**, 2015, Between the Euphrates and Lake Van (on the Location of Hayasa and Azzi). – In: International Symposium on East Anatolia South Caucasus Cultures. Proceedings (eds. M.İşıklı and B.Can). vol.I, Cambridge, 271–276.
- Korosec V.**, 1931, Hethitische Staatsverträge. Ein Beitrag zu ihre juristischen Wertung, Leipzig.
- Kühne C. und Otten H.**, 1971, Der Šaušgamuwa-Vertrag, Wiesbaden.

- Laroche E.**, 1952, Recueil d'onomastique hittite, Paris.
- Laroche E.**, 1971, Catalogue des textes hittites, Paris.
- Miller J.**, 2007, Amarna Age Chronology and the Identity of Nibhururiya in the Light of a Newly Reconstructed Hittite Text, *Altorientalische Forschungen* 34, 252-293.
- Otten H.**, 1967, Ein hethitischer Vertrag aus dem 15./14. Jahrhundert v. Chr. (KBo XVI 47), *Istanbuler Mitteilungen* 17, 55–61.
- Otten H.**, 1968, Die hethitischen historischen Quellen und die altorientalische Chronologie, Wiesbaden.
- Puhvel J.**, 1991, Hittite Etymological Dictionary, vol.3. Words beginning with H., Berlin – New York.
- Riemschneider K. Hukkana.** – In: *Reallexikon der Assyriologie*, Bd.IV, Berlin – New York, 489.
- Rüster Chr. – E. Neu**, 1989, Hethitisches Zeichenlexikon, Wiesbaden (= Studien zu den Boghazkoy Texten, Beih.2).
- Sayce A.H.**, 1930, Hittite and Moscho-Hittite, *Revue Hittite et asianique* 1, fasc.1, 1-8.
- Schuler E. von**, 1965, Die Kaškäer. ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien, Berlin.
- Schuol M.**, 1994, Die Terminologie des hethitischen SU-Orakeln. Eine Untersuchung auf der Grundlage des mittelhethitischen Textes KBo XVI 97 unter vergleichender Berücksichtigung akkadischer Orakeltexte und Lebermodelle I und II, *Altorientalische Forschungen* 21, 73–124, 247–304.
- Van den Hout Th.P.J.**, 1994, Der Falke und das Kücken: der neue Pharao und der hethitische Prinz?, *Zeitschrift für Assyriologie* 84, 60–88.
- Weidner E.**, 1923, Politische Dokumente aus Kleinasien, Leipzig.
- Wilhelm G.**, 2005, Der Vertrag zwischen Šuppiluliuma I. von Hatti mit Tette von Nuhašše. – In: *Staatsverträge, Herrscherinschriften und andere Dokumente zur politischen Geschichte* (Hrsg. B.Janowski und G.Wilhelm)(= TUAT Neue Folge Band 2), Gütersloh, 122–123.
- Wilhelm G. –Böse J.**, 1989, Absolute Chronologie und die hethitische Geschichte des 15. und 14. Jahrhunderte v.Chr. - In.: *High, Middle or Low?*, Gothenburg, 74–117.

ARAM KOSYAN

Doctor of Sciences

Institute of Oriental Studies, NAS RA

aramkosyan@yahoo.com

THE KINGS OF HAYASA

(SUMMARY)

Among the political entities of the Armenian Highland of the II millennium B.C. Hayasa and Azzi hold special place since in the Armenological studies they are associated with the early Armenian statehood the indigenous name of Armenians «hay». The problem of localization of these state formations is an object for scholarly discussions since the beginning of Hittitology.

For the study of the history of Hayasa and Azzi the international treaties concluded between the Hittite empire and Hayasa and other Hittite cuneiform texts («The Deeds of Suppiluliumas I», «The Annals of Mursilis II», HT 85, KBo L 49 and KUB XVIII 2) are of utmost importance, since they contain essential data for the clarification of political and ethnolinguistic situation in the western parts of the Armenian Highland. The first treaty among the abovementioned was signed between the Hittite king Tudhaliyas IV and Mariya, the ruler of Hayasa, the second one between the Hittite king Suppiluliumas I and the ruler of Hayasa Hukkana.

In the article three aspects of the history of Hayasa and Azzi were studied – 1) the character of these treaties, 2) the status of the rulers of Hayasa and their interrelationship, 3) political context of the period under consideration. Despite significant damages, the texts of the treaties had preserved valuable information regarding the abovementioned problems.

In this comparatively small group of texts the names of only four kings of Hayasa and Azzi are mentioned – Karanni, Mariya, Hukkana, and Anniya. Among these the rule of Karanni is less illustrated, although, according to scholars, associated with his name is the capture of Hayasa by the Hittites after the battle near Kummaha («The Deeds of Suppiluliumas I» – Fragment 13).

The main results of the study could be presented as follows.

- 1) Towards the end of the rule of the Hittite king Tudhaliya III, after the battle near Kummaha against Karanni, king of Hayasa, the latter was put under the Hittite control. With Mariya, the next ruler of Hayasa signed a vassal treaty, which has been preserved with considerable damages. At some point Mariya violated his commitments and was executed by Tudhaliya in Hattusa, the Hittite capital.

- 2) Instead of Mariya the throne of Hayasa was given to Hukkana, the father-in-law of Mariya and with him a new treaty was signed. The latter includes regulations characteristic for the Hittite vassal-treaties, such as 1) loyalty towards the Hittite king, his family and Hatti to that moment and in the future, 2) military aid in the case of war (Hukkana was obliged to act on his behalf until the arrival of the Hittite army), 3) prohibition on relations with the third party without the permission of the Hittite king, 4) also Hukkana had to inform the Hittite king about any disloyalty. The treaty was strengthened with the dynastic marriage; one of the sisters of the Hittite king Suppiluliuma I was given to Hukkana as a wife. Among the obligations of Hukkana was the return of Hittite population that had previously found refuge in Hayasa.
- 3) At some uncertain period after the treaty was signed Hukkana also had violated the oath which forced Suppiluliuma I to take an offensive. Suppiluliuma I invaded first the neighboring country of Isuwa, then Hayasa, returning the Hittite refugees.
- 4) The preserved copy of the treaty between the Hittite king and Hukkana is not the original variant, but a later version where some changes had been made after the disloyalty of Hukkana. First of all such a conclusion could be reached when one reads the first lines of the treaty (derisive wording with regard to his adopted son), as well as its final part regarding the refugees.
- 5) To this date one question remains open. Was Hukkana still alive during the Hittite campaign against Hayasa? If yes, then to what consequences this campaign could lead. The badly broken part of the text misses the reference to the ruler of Hayasa; only the refugees are mentioned. In the Hittite texts Hayasa does not figure until in the seventh year of the «Annals» of Mursili II the hostilities are mentioned with Anniya, the king of Hayasa. Taking into account our considerations regarding the restoration of the treaty signed between Mursili II and Anniya, it could be suggested that Mariya was the grandson of Hukkana and son of Mariya.
- 6) Regarding the names of the kings of Hayasa and Azzi several contradictory etymologies have been offered by Armenian and foreign scholars (Gr. Kapancyan, G. Jahukyan, I. M. Diakonoff, W. Ivanov and others). It should be mentioned that the main difficulty in etymologizing these names is the establishment of the language to which they belonged (several Indo-European – Armenian, Hittite, Luwian, Hurrian-Urartian etc.). Unfortunately, the affiliation of the Hayasaeen language remains uncertain. Today the Hayasaeen lexics is represented only by a number of proper names (personal names, toponyms and theonyms), which is not enough for establishing its place in some linguistic family (most probably, Indo-European). Difficulties in etymologizing Hayasaeen personal names regard also to toponyms and theonyms.

АРАМ КОСЯН

*Доктор исторических наук
Институт Востоковедения НАН РА
aramkosyan@yahoo.com*

ЦАРИ ХАЙАСЫ

РЕЗЮМЕ

В числе государственных образований Армянского нагорья II тыс. до н.э. особое место занимают Хайаса и Ацци, которые в арменоведческих исследованиях обычно ассоциируются с древнеармянской государственностью и этнонимом армян. Вопрос о точном местонахождении этих государственных образований является объектом дискуссий чуть ли не с самого начала хеттологической науки.

Для исследования истории Хайасы и Ацци имеют важнейшее значение межгосударственные договоры заключенные с соседней Хеттской империей и связанные с ними другие клинописные тексты («Деятельность Суппилиумаса I», «Анналы» Мурсилиса II, HT 85, KBo L 49 и KUB XVIII 2), которые предоставляют необходимые материалы для выяснения политической и этнолингвистической ситуации западной части Армянского нагорья. Из вышеперечисленных договоров первый был заключен между хеттским царем Тудхалиясом III и правителем Хайасы Марийа, второй – между Суппилиумасом I и хайасским правителем Хукканой.

В статье рассматриваются три проблематичных вопроса истории Хайасы и Ацци – 1) характер хеттско-хайасских договоров, 2) статус хайасских правителей и их родственные связи, а также 3) политический контекст изучаемой эпохи. Несмотря на значительные повреждения, тексты договоров сохранили ценную информацию по интересующим вопросам.

В этой относительно небольшой группе текстов сохранились имена лишь четырех правителей Хайасы и Ацци – Каранни, Марийа, Хуккана и Аннийа. Среди них менее всего известно о правлении Каранни, хотя с его именем связано, по мнению специалистов, завоевание Хайасы хеттами в результате битвы при Куммахе («Деятельность Суппилиумаса I» – Фрагмент 13).

Основные выводы исследования можно представить следующим образом.

- 1) К концу правления Тудхалияса III, а именно после битвы при Куммахе между хеттами и хайасским правителем Каранни, Хайаса подпала под влияние Хеттской империи. С новым правителем Хайасы Марийа

был подписан вассальный договор, который сохранился в значительно поврежденном виде. После этого Марийа не выполнил наложенные на него обязательства, и был казнен в хеттской столице тем же Тудхалиясом.

- 2) Вместо Марийа правителем Хайасы хеттским царем был назначен его тесть Хуккана, с которым также был заключен договор. Последний включает типичные для хеттских вассальных договоров пункты, регулирующие взаимоотношения зависимого царства с метрополией, а именно – 1) лояльность по отношению к хеттскому царю, к его семье и к Хатти как в настоящее время, так и в будущем, 2) поддержка хеттскому царю воинским контингентом в случае войны (Хуккана обязывался действовать по обстоятельствам до тех пор пока не придут хеттские войска), 3) запрет на самостоятельные отношения с третьей стороной без ведома хеттского царя, 4) Хуккана должен был заблаговременно оповестить царю о действиях нелояльных людей. Договор был подкреплён династическим браком; Хуккане была отдана в жены одна из сестер хеттского царя. В числе обязательств Хукканы текст договора упоминает возвращение хеттских беженцев, которые еще раньше нашли пристанище в Хайасе.
- 3) через некоторое время после подписания договора Хуккана также отказался от своих обязательств, что привело к применению силы со стороны хеттского царя. Суппилиумас I отправился в поход сначала в соседнюю с Хайасой Исуву, а затем и в Хайасу, откуда вернул хеттских беженцев.
- 4) Сохранившийся текст договора между хеттским царем и Хукканой не является оригиналом, а более поздней версией, где после нелояльных действиях Хукканы были произведены некоторые изменения. В особенности на такое мнение можно прийти из чтения начальных строк договора (издевательская форма обращения к своему зятю), а также концовки, где хеттский царь настоятельно требует вернуть беженцев.
- 5) В настоящее время остается невыясненным один вопрос, был ли жив Хуккана во время похода хеттов на Хайасу. Если да, то каковы могли быть последствия этот похода. В достаточно поврежденной части текста не сохранилось упоминание о правителе Хайасы; там повествуется только о возвращении беженцев. В хеттских текстах отсутствуют какие-либо упоминания о Хайасе до тех пор, пока в «Анналах» Мурсилиса II под седьмым годом говорится о натянутых отношениях с царем Хайасы Аннией. На основании предложенной автором статьи реконструкции текста договора между Мурсилисем и Аннией можно

предположить, что последний мог являться внуком Хукканы и сыном Марийа.

- 6) По поводу имен царей Хайасы и Ацци в специальной литературе были высказаны мнения – порой противоречащие друг другу – со стороны ведущих армянских и зарубежных лингвистов (Гр. Капанцян, Г. Джаукян, И. М. Дьяконов, Вяч. Иванов и др.). Следует отметить, что ученые расходятся в основном относительно возможного языка-основы этих имен (несколько индоевропейских – армянский, хеттский, хурритско-урартский и др.). К сожалению, до сих пор остается невыясненным вопрос о принадлежности хайасского языка. Последний в настоящее время представлен лишь рядом собственных имен (личные имена, топонимы и теонимы), что явно недостаточно для определения места этого языка в какой-либо языковой семье (наиболее вероятным кандидатом являются индоевропейские языки). Трудности по поводу этимологизации имен царей Хайасы в равной степени относятся и к хайасским топонимам и теонимам.